# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 078 - 26

<<16>>__մարտի_2026թ — ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ <<ՌԵԳՈՒԼ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Լոռու մարզի, Յաղդան գյուղի 13-րդ դարի կամրջի նորոգման, ամրակայման և վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 169 714.04 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 3 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

տնօրեն Ն. Միրեկյանյան

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Լոռու մարզի, Յաղդան գյուղի 13-րդ դարի կամրջի նորոգման, ամրակայման և վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր</u>

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ <<ՌԵԳՈՒԼ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի, Յաղդան գյուղի 13-րդ դարի կամրջի նորոգման, ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացում:

Յաղդան գյուղի Արխաշան գետակի վրա է տեղադրված 13-րդ դարի Կամուրջը: Այն Լոռի Բերդ ամրոց – քաղաքատեղին Տաշիր Ձորագետի թագավորության արևելյան տարածքներին կապող ճանապարհի կամուրջներից մեկն է: Միաթռիչք է, կազմված գետափնյա գրեթե նույն նիշում ժայռերի վրա տեղադրված երկու խելերից, ծածկված միաթռիչք թաղով: Վերնամասում ունի 0.51 մ բարձրությամբ պարապետ՝ երկքեք վերին գոտով: Կամուրջը կառուցվել է 13-րդ դարում և վերականգնվել է նախորդ դարի 80-ական թվականներին: Ծառայել է որպես հետիոտն, ինչպես նաև սայլերի, այնուհետև ավտոմեքենաների անցուղարձի համար: Կոնստրուկտիվ տեսանկյունից հիմնական կրող տարրերը երկու, ուղղանկյանը մոտ հատակագծով, արտաքուստ սրբատաշ շարով, ներքուստ կրաշաղախ-խիբարային լիցքով խելերն են, որոնց վրա հենցած է՝ գագաթում մոտ 1 մ հաստությամբ թաղը: Խելերի վրա են հենված նաև կամրջի չորս կողապատերը, որոնք պարապետի նիշերում ունեն 0.5 մ հաստություն:

Թաղի և չորս պատերի միջակայքում, խելի վերին նիշից վերև մինչև երթևեկելի մակերևույթ առաջացած ծավալը ներկայումս լցված է թույլ մակնիշի բարդ շաղախ-խիբարային լիցքով, որի վրա դրենաժային 0.35 մ հզորությամբ ավազաշերտն է մշկված

քարերով: Տարիների ընթացքում ջրի ներթափանցման արդյունքում շաղախը՝ ունեցել է վատ որակ, քայքայվել է և հիմնական շինարարական թերությունը հանդիսանալով, հասցրել է վնասներ կամուրջի կոնստրուկցիաներում՝ մասնավորապես հարավարևելյան պատի մի հատվածը փլուզվել է, իսկ մյուս հատվածը և պատերի վերականգնված հատվածները անջատվել են շաղախից և թեքվել են ուղաձիգից: Նույն վիճակում է նաև կամրջի պարապետը և դրա վրադիր երկթեք գոտին: Ողողվել և մասնակի լվացվել է հիմնականում վերին շարքերի միջուկը Իսկ ահա կամուրջի 13-րդ դարում կառուցված պատերի հատվածները և թաղը վնասվածքներ դրեթե չունեն: Կոնստրուկտիվ այլ վնասվածքներ չեն հայտնաբերվել: Ողողվել և մասնակի լվացվել է հիմնականում վերին շարքերի: Կամրջի կոնստրուկտիվ համակարգը լուծված է գետափնյա ժայռային բնահողի վրա տեղակայված միաթռիչք կամարակապ թաղաշարով, վերջինիս հետ միաձույլ ամբողջականություն կազմող ափամեծ պատերով ու բազրիքաշարով: Կամրջի բոլոր կոնստրուկտիվ տարրերն իրականացված են կանոնավոր ձևերով մշակված մաքրատաշ ու դարաղամշակ երեսվածքներով բազալտաքարերից, կրաավազային և ցեմենտ ավազի շաղախների կիրառմամբ: Ափամերձ հենապատերը, որոնք ներքին շերտում իրականացվել են ճեղքված կոպտատաշ բազալտից, կամարատներից ու թաղաշարից վերև ունեն փոփոխական հաստություններ՝ միջանկյալ շուրթերով նեղանալով ներքևից դեպի վերև, որոնց վերին շուրթերի վրա տեղադրված են երկկողմանի մաքրատաշ երեսաշարով ու խուփածածկերով բազրիքապատեր: Կողապատերի ու թաղաշարի միջև ընկած ծավալներում մինչև բազրիքապատերի ստորին նիշը, իրականացված է բնահողի լիցք, որը համահարթեցվել է գագաթից դեպի ափերը՝ որպես երկթեփ ճանապարհապաստառ և երեսածածկվել է կապտականաչավուն գուներանգների խոշորաչափ կոպտատաշ սալաքարերով: Կամրջի նկատմամբ 1980-ական թվականներին կատարվել են վերականգնողական աշխատանքներ, պահպանվել են կամրջի թաղաշարը և կողապատերի կանգուն մնացած առանձին հատվածներն ու նոր քարերի համալրումով այն վերականգնվել է ամբողջությամբ: Վերականգնված հատվածներում կիրառվել են ցեմենտ ավազի կապակցաշաղախ և բետոնի միջնաշերտ:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում, գրունտների մշակում: Խելերի և թաղի վրայի հողի լիցքի հեռացում: Տեղաշարժված և շաղախից առանձնացած քարերի քանդում վերաշարում: Կամուրջի բացակայող

ռատվածների նոր տաշ ու շար՝, կարանախցափակում և ներարկում: Կոնստրուկտիվ միջոցառումներ և նոր երթևեկելի մակերևույթի կառուցում: Արտաքին գեղարվեստական լուսավորության ցանցի անցկացում, IP 68 ստանդարտի լուսատուներով : Տարածքի բարեկարգում աշխատանքների իրականացում: Կամուրջի մոտեցման ճանապարհը սկսած ասֆալտապատ ճանապարհի մուտքից մինև կամուրջ և կամուրջից հետո մինչև ճանապարհի մոտակա ոլորանը, ինչպես նաև նախքան կամուրջ բլրակը՝ գագաթին խաչքարով, բարեկարգել կառուցելով ճեմուղիներ տեղական նստվածքային քարատեսակի ճեղքված սալերով:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **169 714.04** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը 2467.79 և մեքենաների շահագործման ինդեքսը 3057.60

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. N **11** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

*Տնօրեն* *Ն. Սիրեկանյան*